ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА

ГЕНЕРАЛЬНЫЙ СЕКРЕТАРЬ

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT

GENERAL SECRETARY

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: 59- 96-08 , ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, secretariat@escs.am,www.escs.am

N---------- **----------** **----------2022թ.**

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի
նախագահ Շուշան Դոյդոյանին
Հասցե՝ ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ
Հեռ.՝ +37491407836
Էլ. հասցե՝ foi@foi.am

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

Ի պատասխան ՀՀ ԿԳՄՍ նախարարին ուղղած Ձեր՝ 28.12.2021թ. թիվ 348-51 գրության՝ հայտնում ենք հետևյալը.

ՀՀ ԿԳՄՍՆ ընդհանուր բաժինը ֆիզիկական և իրավաբանական անձանցից հարցումներ ստանալիս և գրանցելիս կատարում է տարբերակում՝ դրանք առանձնացնելով ֆիզիկական և իրավաբանական անձանցից ստացված այլ գրություններից և դիմումներից:
ԿԳՄՍՆ մուտքագրվող յուրաքանչյուր հարցման վերնագրում մեծատառերով գրվում է «Հարցում» բառը և, ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետով, կատարման համար նշանակվում է 5 օրացուցային օր ժամկետ: Կատարող ստորաբաժանման կողմից սահմանված ժամկետում հարցմանը չպատասխանելու դեպքում այդ ժամկետի վերջին օրն ընդհանուր բաժինը համապատասխան աշխատակցին տեղեկացնում է հարցմանը պատասխանելու անհրաժեշտության մասին:
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձը նախարարի մամուլի քարտուղարն է: Նախարարության տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձը նշանակվել է՝ համաձայն ԿԳՄՍ նախարարի 2021 թ.-ի նոյեմբերի 19-ի թիվ 1828-Ա հրամանի: Կից ներկայացնում ենք հրամանի պատճենը: Նախարարության տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար

անձ հանդիսացող ԿԳՄՍ նախարարի մամուլի քարտուղարն այլ պաշտոնում մասնակցել է քաղաքացիական հատուկ ծառայության համար նախատեսված երեք վերապատրաստումների, որոնց շրջանակում ներառված են եղել նաև տեղեկատվության ազատության վերաբերյալ դասընթացներ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՎԱՀՐԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆ

/պարտականությունները կատարող/

Recoverable Signature

X

ՎԱՀՐԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Signed by: GASPARYAN VAHRAM 3203740222

Կատ.՝ Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչություն
Հեռ.՝ 599-612
Ընդհանուր բաժին
Հեռ.՝ 599-667